«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողի կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Էվելինա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ թիվ 132 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գրական ակնարկ 6

Հետազոտություն 8

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել, դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների:

Բալզակ

Ուսուցիչների համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողի կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, ունի կարևոր նշանակություն ժամանակակից հասարակությունում: Վերջին տասնամյակների կրթական բարեփոխումները փոփոխել են նաև ընտանիք-դպրոց՝ իբրև դաստիարակության երկու համարժեք կառույցի հարաբերությունների բնույթը:

Դաստիարակությունը կրթության գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է, որն ուղղված է երկու փոխկապակցված նպատակների իրագործմանը՝ հասարակության մեջ քաղաքացու սոցիալականացմանն ու անհատականության ձևավորմանը: Դաստիարակությունը հասարակության ամենակարևոր գործառույթն է եղել դեռևս վաղ ժամանակներից: Առանց սոցիալ-պատմական փորձը սերնդից սերունդ փոխանցելու, սոցիալական և արդյունաբերական հարաբերություններում առանց երիտասարդության ներգրավման չի կարող տեղի ունենալ հասարակության զարգացում, դրա մշակույթի պահպանում և հարստացում, մարդկության քաղաքակրթության գոյություն:

Հասարակության զարգացման հետ փոխվում է դաստիարակությունը՝ դրա նպատակներ, բովանդակությունը, միջոցները: Ընտանիք, ծնող ինստիտուտի կարևորությունը և կրթական համակարգի բարեփոխման աշխատանքները հանգեցրել են երեխաների դաստիարակության երկու գլխավոր սուբյեկտների՝ ընտանիք և դպրոց փոխհարաբերությունների բնույթի արժևորմանը: Ժամանակակից հայեցակարգերի համաձայն՝ դաստիարակության հիմնական նպատակը երեխայի անձնական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Ընտանիքն այդ նպատակին հասնում է ծնողների ակտիվ մասնակցության, աջակցության և երեխայի մեծանալու տարբեր ժամանակահատվածներում առաջացած խնդիրների լուծման միջոցով: Ժամանակակից կրթության խնդիրն առաջին հերթին ծնողների պասիվ ներգրավվածությունն է սեփական երեխայի դաստիարակությանը, պատասխանատվության ոչ բավարար մակարդակն է երեխայի կյանքի, առողջության և նրա կայուն ապագայի հանդեպ:

Ելնելով նրանից որ ուսուցիչներն ունեն մասնագիտական իրավասություն դաստիարակության հարցերում, հենց դպրոցն առաջին հերթին պետք է հանդես գա որպես ընտանիքի՝ իբրև երեխայի առաջին դաստիարակչի հետ, գործնական փոխգործության նախաձեռնող: Ընտանիքի ու դպրոցի համաձայնեցված համատեղ

գործողությունները երեխայի անձի լիարժեք զարգացման հաջողության գլխավոր պայմանն է: Հարկավոր է նկատել, որ նշված համագործակցությունը որոշ չափով ունի ստիպողական բնույթ, քանի որ դաստիարակության երկու ինստիտուտներից յուրաքանչյուրն ունի մյուս սոցիալական ինստիտուտի աջակցության և օգնության օբյեկտիվ պահանջ: Ընտանիքն ու դպրոցը ներկայացնում են յուրօրինակ «երթուղային զույգ», որի ձգտումներն ուղղված են երեխայի դաստիարակության ընհանուր նպատակի նվաճմանը:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն ու կրթությունն արդյունավետ կլինեն միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն միասնական նպատակներ ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակեն խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում:

Նպատակահարմար է ծնողների հետ համագործակցությունը կազմակերպել խմբային և անհատական ձևերով: Ծնողական ժողովներում սկիզբ առած բացատրական աշխատանքը պետք է շարունակել տանը և դպրոցում՝ ծնողների հետ անհատական հանդիպումների ժամանակ: Ծնողների հետ անհատական զրույցները հաճախ թելադրում են կոլեկտիվ աշխատանքի ձևեր ու բովանդակություն:

Խրախուսելի են նաև ծնողների և աշակերտների համատեղ ժողովները: Քննության են առնվում ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման հարցերը: Աշակերտները ցուցադրում են իրենց նվաճումները ուսման մեջ, պատմում են տարբեր խմբակներում տարվող աշխատանքների մասին:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում:

Ընտանիքի և դպրոցի համագործակցության գործընթացը ենթադրում է միասնական մոտեցումներ և պարտավորություններ երեխայի կրթական գործընթացում: Համագործակցության ընթացքում դպրոցը պետք է ներգրավի ծնողին դպրոցական միջավայրում՝ թույլ տալով նրանց ակտիվ մասնակցել դպրոցի կազմակերպած միջոցառումներին կամ երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը՝ հանդես գալով որպես լիիավ գործընկերներ: Այս գործընթացը նաև նպաստում է ծնողավարման հմտությունների զարգացմանը: Համագործակցության արդյունքում փոփոխվում են ծնողի սոցիալական հուզական և անձնային հատկանիշները. նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, դառնում են ավելի հոգատար, ինքնավստահ, գնահատում են երեխայի ձեռքբերումները, ավելի մեծ ուշադրություն են դարձնում նրա սոցիալական,

հուզական և մտավոր զարգացմանը, հաճույքով միանում են երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին, ինչպես նաև դրական հարաբերություններ են ստեղծում իրենց երեխայի ուսուցիչների հետ: Համագործակցությունը դրականապես է անդրադառնում ոչ միայն սովորողի ընտանիքի վրա, այլև դպրոցի վրա, քանի որ ուսուցիչներն ավելի ինքնավստահ են դառնում, ձևավորվում է հարգանք սեփական մասնագիտության և կատարած աշխատանքների նկատմամբ, աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ, դպրոցական ծրագրերը դառնում են ավելի հաջողված:

Անժխտելի է, որ ընտանիք - դպրոց համագործակցությունը դրական ազդեցություն է ունենում ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների վրա և բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

ՈՒսուցիչ-ծնող աղյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև նշված սկզբունքներին:

- **Վստահություն:** Ծնողի հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսվում է վստահությունից:
- **Պահպանել երկկողմանի կապ:** Երկու կողմերն էլ պետք է հասկանան միմյանց պահանջներն ու նպատակները: ՈՒսուցիչը պետք է տեղյակ լինի ոչ միայն սովորողից, այլև նրա ընտանիքի անդամներից:
- **Համագործակցություն:** Համագործակցող կողմերը պետք է ընդհանուր եզրեր գտնեն հաջողության հասնելու համար, ընդհանուր նպատակներ սահմանեն:
- **Կրել ընդհանուր պատասխանատվություն:** Տանը և դպրոցում ծագած խնդիրների լուծման ընթացքում պետք կրել ընդհանուր պատասխանատվություն:
- **Պահպանել ջերմ հարաբերություններ:** Դպրոցական ամբողջ ուսումնառության ընթացքում անհրաժեշտ է պահպանել ջերմ, բարիդրացիական, աջակցող հարաբերություններ:
- **Խթանել և քաջալերել:** Խթանել ծնողի առաջարկները օգնության տարբերակները ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Անցել են այն ժամանակները, երբ ծնողը բավարարվում էր առավոտյան երեխային դպրոց ճանապարհելով և տուն տանելով: Այժմ առանց ծնողի օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումը օգնում է ուսուցչին հասկանալ, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, ինչն է այս կամ այլ կերպ ազդել նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա:

Անհրաժեշտ է նրանց գիտակցությանը հասցնել այն, որ իրենք միայնակ չեն, իրենց կողքին են ուսուցիչները, ծնողները և ընկերները:

Ուսուցիչ-ծնող կապի գործուն միջոց է և փոխադարձ շփման լավ հնարավորություն հաճախակի կազմակերպվող ծնողական ժողովները: Յուրաքանչյուր հանդիպում ծնողների համար պետք է լինի օգտակար և արդյունավետ, նրանց մանկավարժական, հոգեբանական, աշակերտների ուսումնական գործընթացը խթանող նոր մոտեցումներով: Ուսուցիչը չպետք է պախարակի կամ քննադատի սովորողի անձը, ինքնանպատակ ցուցադրի նրա սխալներն ու անհաջողությունները: Չի կարելի վիրավորել նաև ծնողի արժանապատվությունը: Միշտ հարկավոր է հիշել, որ ամեն մի ծնողի համար իր երեխան ամենաթանկն է կյանքում: Ուստի հարկավոր է նրբանկատ մոտեցում ցուցաբերել երեխաներին գնահատականներ տալիս:

Առաջին ծնողական ժողովը պետք է կազմակերպել մինչև ուսումնական տարին սկսվելը, որպեսզի համատեղ կազմեն աշակերտի սոցիալական անձնագիրը, որպեսզի ներկայացվի երեխաների դպրոցական և դասարանական առօրյան, կարգ ու կանոնը: Ծնողական ժողովները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ կազմակերպչական, թեմատիկ և գործնական բնույթի:

Գրական ակնարկ

Գաղտնիք չէ, որ ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ փոխանցողն ընտանիքն է: Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակ մարդու կերտելու գործընթացն է, ոչ սոսկ իբրև ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների խտացում:

Ռուս հայտնի մանկավարժ և գրող Կոնստանտին Ուշինսկիի խոսքով՝ դաստիարակությունը, որը ստեղծել է ժողովուրդը, և որը հիմնված է ժողովրդական սկզբունքների վրա, ունի այնպիսի գերբնական ուժ, որը գոյություն չունի աբստրակտ գաղափարների հիման վրա ստեղծված համակարգում:

Ժամանակակից ուսուցիչների խնդիրը երեխաներին ոչ միայն գիտելիք փոխանցելն է այլ նաև նրանց մեջ որոշումների կայացման ինքնուրույնություն, գործողություններում՝ նպատակասլացություն և ինքնադաստիարակման ունակություններ ստեղծելն է:

Արևմտյան «դպրոցում» մակավարժների կատարած հետազոտությունները պարզել են, որ երեխաների մեծանալուն և նրանց՝ ավագ դասարաններ փոխադրելուն զուգահեռ, ծնողներն ավելի հաճախ են շփման մեջ մտնում մանկավարժների հետ սեփական նախաձեռնությամբ՝ դպրոցի անհատական այցելությունների կամ հեռախոսազրույցների միջոցով: Այսպիսի պրակտիկան վկայում է, որ երեխայի մեծանալուն զուգահեռ ծնողներն ավելի մեծ պատասխանատվություն են զգում իրենց ապագայի հանդեպ:

Ռոս Քեմփբելը բժիշկ է, ով աշխատում է Թենեսիի հոգեբանական կլինիկայում, գրել է. «Երեխաների հետ լավ հարաբերությունների հիմքն անկեղծ, անվերապահ սերն է, որը հրաշքներ է գործում, առանց որի անհնար է հասնել լիակատար վստահության և փոխըմբռնման, լուծել հուզական խնդիրները և սովորեցնել երեխային հարգել ծնողներին»:

Իտալացի հոգեբան Մարիա Մոնտեսորին անվճար կրթության գաղափարների ներկայացուցիչն է: Ըստ նրա երեխան պետք է ունենա գործողության և ինքնարտահայտման ազատություն, ուստի մեծահասակների համար անցանկալի է միջամտել նրանց գործողություններին և խաղերին:

Սուխոմլինսկու մակավարժական գործունեության հիմքում ընկած էր անհատականությունների դաստիարակությունը. «Երեխային պետք է այնպես սովորեցնել, որ նրա մեջ ինքնակրթությամբ զբաղվելու ցանկություն առաջանա: Նրան պետք է այնպես դաստիարակել, որ նրա մեջ ինքնադաստիարակման ձգտում

առաջանա»: Ըստ Սուխոմլինսկու՝ դաստիարակության նպատակն բազմակողմանի զարգացումն ու բարոյական կատարելությունն է: Սոխոմլինսկին հավատում էր, որ յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա: Ըստ նրա առանձնացվում է՝

1.աշխատանքային դաստիարակություն

2.գեղագիտական դաստիարակություն

3.բարոյական դաստիարակություն:

Կոմենսկին մեծ տեղ էր տալիս սովորողների համար ուսուցման մատչելիության դիդակտիկական պահանջին: Կոմենսկին գտնում էր, որ երեխաներին կրթության և դաստիարակության համար պետք է տալ միայն այն, ինչը մատչելի է նրանց տարիքին: Անհրաժեշտ է չշտապել, հասնել նրան, որ երեխաները լրիվ յուրացնեն մատուցվող նյութը: Նա կարևորում էր յուրացված նյութի կրկնությունները: Կոմենսկին առաջարկում էր ուսումնական խնդիրները լուծելու միասնական աշխատանքի ուղիներ՝ խոսքային, զրույցի, զննական, գործնական մեթոդներ:

Մեծ մանկավարժներ, հոգեբաններ, փիլիսոփաներ կրթության և դաստիարակության ընթացքում առաջնային են համարել ուսուցիչ-ծնող համագործակցությունը:

Հետազոտություն

Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը մարմնի:

Ադիսոն

Երեխաները պետք է ապրեն գեղեցկության, խաղի, հեքիաթի, երաժշտության, նկարների, երևակայության, ստեղծագործության աշխարհում: Այդ աշխարհը երեխային պետք է շրջապատի նաև այն դեպքում, երբ մենք ցանկանում ենք նրան գրել, կարդալ սովորեցնել: Թե երեխան ինչպես կզգա իրեն, բարձրանալով իմացության սանդուղքի առաջին աստիճանին, ինչպիսի ապրումենր կունեան նա, դրանից է կախված դեպի գիտելիքներ տանող նրա հետագա ամբողջ ճանապարհը: Շատ կարևոր է ճիշտ ձևավորել, իսկ հետագայում նաև զարգացնել սովորելու ցանկությունը, կարողությունը և հմտությունը: Կրթությունն իբրև աշխատանքի յուրահատուկ ձև բնութագրվում է որպես գիտելիքների հաղորդման, կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթաց: Այս փուլերը միշտ գտնվում են զարգացման մեջ: Գիտելիքի մեծ մասը ձեռք է բերվում որպես աշխարհի ճանաչման միջոց, մարդկության անցյալի, ներկայի ու ապագայի խոշոր հայտնագործությունների, նշանավոր դեպքերի ու դեմքերի, բնության, բուսական ու կենդանական աշխարհի, գիտության տարբեր բնագավառների մասին:

Մարդն իր ողջ կյանքում, գործունեության բոլոր բնագավառների ողջ տեղեկատվությունը ձեռք է բերում գրավոր տեքստերի հետ շփման՝ ընթերցանության միջոցով: Կարդալու գործողությունը, ըստ էության, հոգեկան մի բարդ երևույթ է, որի վերլուծությունը կօգնի հնարավորին չափ ճիշտ ըմբռնելու այդ գործընթացի առանձին կողմերն ու դրանց ուսուցման դժվարությունները: Կարդալու համար միայն տառերը ճանաչելն ու միմյանցից տարբերելը դեռևս բավական չէ, պետք է տիրապետել կարդալու որոշակի չափանիշների: Կարդալու հմտությունների ձևավորումը կատարվում է կրտսեր դպրոցում:

Ընթերցելու կարողությունն ընգրկում է երկու կողմ՝ ընթերցանության տեխնիկա և ընթերցածի ընկալում: Ընթերցանության տեխնիկան գիտելիքների, հետագա ուսումնական կարողությունների հիմքն է, քանի որ բովանդակության լիարժեք ընկալում հնարավոր է տեխնիկապես սահուն ընթերցելու դեպքում միայն: Եթե երեխան վատ է կարդում, բնականաբար չի ցանկանում զբաղվել ընթերցանությամբ: Մյուս կողմից՝ քիչ կարդալու պարագայում չի կարող լավ

կարդալ, քանի որ կարողությունը զարգացնելու հնարավորությունները սահմանափակ են: Բացի այդ, ընթերցանության բովանդակության ընկալումն էլ իր հերթին կրող է խթանող դեր կատարել, հետաքրքրել, մղել ընթերցանության, ինչի արդյունքում էլ բարելավվում է տեխնիկան:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է այնպիսի մեթոդներ և գործիքներ, որոնք երեխայի մոտ կարդալու ցանկություն կառաջացնեն, կմղեն նրան ինքնուրույն ընթերցանության: Ընթերցանության լավ տեխնիկան թույլ է տալիս զարգացնել՝

1.լեզվական տարրական գիտելիքները

2.լեզվամտածողությունը,

3.բանավոր խոսքը,

4.գրավոր խոսքը,

5.հստակ արտահայտման կարողությունները,

6.տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հմտությունները,

7.ստեղծագործական մտացծողությունը,

8.երևակության զարգացումը,

9.հակադրվելու հմտությունները,

10.բովանդակության ճիշտ հասկանալու կարողությունը,

11.անկաշկանդ արտահայտվելու կարողությունը,

12.ճիշտ և փաստարկված խոսքի կառուցումը,

13.դատողություններ կատարելու հմտությունը,

14.մյուս առարկաների հեշտ յուրացումը,

15.կարծիք, վերաբերմունք հայտնելը,

16.գեղագիտական ճաշակը,

17.աշխարհաճանաչումը,

18.արժեհամակարգի ձևավորումը:

Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի ու ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը, ինչի արդյունքում դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման, ուսումնառության ընթացքում:

Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության ու մոտիվացիայի վրա: Այս առումով

առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը: Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլ կրթության բովանդակային մաս, որի համար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան՝ ունենալով չափելի արդյունքներ:

«Ընթերցանության օգտավետության մասին» զրույցում ժամանակակից փիլիսոփա Անդրեյ Բաումեյստերը նշում է. «Տեսողական ինֆորմացիան ուղեղը պասիվ է ընկալում, վերլուծական հմտություն չի պահանջում: Ինչպես գիտենք, տեքստը սիմվոլների հավաքածու է. երբ կարդում ենք տեքստը, ըստ էության, մեր ուղեղը վերծանում է այն. տառերից՝ բառ, բառերից՝ նախադասություն, որից հետո մենք կարդացածն իմաստավորում ենք, ինչի արդյունքում ուղեղն ահռելի ակտիվ աշխատանք է կատարում, ինչը մղում է ուղեղի զարգացմանը, մարդու զարգացմանը: Որքան էլ ընթերցումը համարեն հնացած սովորություն, տեղեկություն ստանալու աղբյուրներ դիտարկվեն տեսանյութը, ձայնագրությունները, համացանցը, միևնույնն է ընթերցանությունն ուղեղը մարզելու, կոփելու եզակի, լավագույն միջոցներից է»:

Ընթերցումն անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից: Տարրական դպրոցում ընթերցանության խրախուսման համար նախատեսված միջոցառումները, ըստ իրականացման բնույթի, պայմանականորեն բաժանվում են 2 բաժինների՝ դասարանային ու արտադասարանային:

Դասարանային աշխատանքները կապվածեն մայրենիի առարկայական նպատակների հետ: Դրանք ընդգրկվում են առարկայականտարեկան թեմատիկ պլանավորման մեջ ու առաջարկվող ժամանակացույցով իրականացում են դասերի ընթացքում: Արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են դասարանային աշխատանքներին զուգահեռ՝ դպրոցից դուրս, կամ ընթերցանության խմբակին՝ շաբաթական 1 ժամ, տարեկան 32-34 ժամ ծավալով: Սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման դասարանային, արտադասարանային աշխատանքները պետք է հանգամանորեն պլանավորվեն, ունենան աստիճանական զարգացում, իրագործվեն՝ փոխլրացնելով իրար:

Անհրաժեշտ է հետաքրքրություն առաջացնել գրքի և ընթերցանության նկատմամբ: Իհարկե, չկան պատրաստի բաղադրատոմսեր, որոնք կսովորեցնեն սիրով սովորել, սակայն կան մեթոդներ, փորձված հնարներ ու միջոցներ, որոնց կիրառմամբ կարող ենք երեխային մղել ընթերցանությանը՝ այն առավել հետաքրքիր դարձնելով: Անհրաժեշտ և կարևոր է ծնողների աջակցությունը, ուսուցիչ-ծնող ճիշտ համագործակցությունն այս հարցում: Այդ համացործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար ծնողներին եմ ներկայացնում մի քանի կարևոր պահանջներ:

1.Ընթերցանության համար անհրաժեշտ է ժամանակ տրամադրել ամեն օր: Կարդալ անհրաժեշտ է սկսել երեխայի կյանքի վաղ տարիքից: Ընտրել հարմար վայր, կարդալ երեխայի համար, անգիր արտասանել, պատմել՝ այս եղանակներով ընդլայնում եք երեխայի աշխարհայացք, օգնում եք նրան սիրել ընթերցանությունը, հարստացնել բառապաշարը:

2. Հաճախակի օգտվել գրադարանից: Անհրաժեշտ է երեխայի հետ այցելել գրադարաններ, ընթերցել գրադարանում կամ ձեռք բերել գրքեր երեխայի նախասիրությամբ: Պետք է թույլ տալ, որ երեխան ինքն ընտրի իրեն հետաքրքրող գիրքը:

3.Դաստիարակեք ընթերցող ձեր անձնական օրինակով: Հաճախակի կազմակերպեք տնային ընթերցանություններ, ինքներդ կարդացեք գրքեր, լրագրեր, թերթեր: Կարող են ընտանիքում բոլոր անդամները դառնալ օրինակ սովորողի համար: Այնուհետև կազմակերպել քննարկումներ, վերլուծություններ կարդացածի շուրջ:

4.Կազմել ընտանեկան գրադարանի գրքերի ցանկ: Այս աշխատանքը կատարել երեխայի անմիջական մասնակցությամբ առանձնահատուկ վերաբերմունք դրսևորել երեխայի տարիքին ու հետաքրքրություններին համապատասխան գրքերի նկատմամբ:

5.Ընթերցել դանդաղ հաճույքով և բացատրելով անծանոթ բառերը: Անհրաժեշտ է ընթերցել ձայնի ելևէջների փոփոխությամբ, համապատասխան դադարներով, նկարները դիտելով, հաճախակի հարցադրումներ կատարելով, բացատրելով երեխային անծանոթ բառերն ու արտահայտությունները:

6.Կրկին ու կրկին կարդալ: Շատ հաճախ երեխաները սիրում են կարդալ, լսել նույն պատմությունը: Այդ կերպ երեխան ենթագիտակցորեն ցանկանում է ավելի ու ավելի խորը հասկանալ այդ պատմությունը, դաստիարակվում է ընթերցածի մասին լիարժեք ընկալման վերաբերմունք:

7. Երեխային մի ստիպեք կարդալ: Երեխային ստիպելով կարդալ նրա մեջ վերացնում եք հետաքրքրությունն ընթերցանության և ուսման հանդեպ: Պետք է փնտրել դրական և արդյունավետ եղանակներ երեխային մոտիվացնելու, հրապուրելու համար:

8.Ընթերցել շարունակելով: Ընտրել որևէ ստեղծագործություն, կարդալ մի փոքրիկ հատված, ապա ամենահետաքրքիր մասում կանգ առնել և թույլ տալ, որ բնագրի ընթերցումը շարունակի երեխան:

Ընթերցանությունը բարելավելու նպատակով ստուգել եմ իմ դասավանդած 4-րդ դասարանում սովորողների բարձրաձայն ընթերցանության տեխնիկան: Ընթերցանությունն ստուգել եմ մի քանի որակական չափանիշներով:

1. Ընթերցանության արագություն՝

Ա - Կարդում է 1 րոպեում մինչև 25 բառ:

Բ - Կարդում է 1 րոպեում մինչև 40 բառ:

Գ - Կարդում է 1 րոպեում ավելի քան 40 բառ:

2. Ընթերցանության սահունություն՝

Ա - Կարդում է ոչ այնքան սահուն, բառերն արտասանում է հստակ, բայց կրկնելով կամ կմկմալով:

Բ - Կարդում է բավականին սահուն, առանց դժվարության, բառերը հիմնականում արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:

Գ - Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:

3. Ընթերցանության ճշգրտություն՝

Ա - Հիմնականում կարդում է ճիշտ, բայց հաճախ կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:

Բ - Կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:

Գ - Կարդում է ճիշտ և անսխալ՝ առանց ուսուցչի ուղղորդման և օգնության:

4. Ընթերցանության ընկալում՝

Ա - Ընկալում է կարդացածի իմաստը, բայց դժվարանում է ապահովել տրամաբանական դադարները, դա անում է ուսուցչի օգնությամբ:

Բ - Գրեթե ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, մեծ մասամբ ապահովում է տրամաբանական դադարները՝ երբեմն դա անելով ուսուցչի օգնությամբ:

Գ - Ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, ապահովում է տրամաբանական դադարները:

5. Ընթերցանության արտահայտչականություն՝

Ա - ա. Կարդում է ոչ այնքան արտահայտիչ, դժվարությամբ է առանձնացնում տրամաբանական շեշտերը՝ նույնիսկ ուսուցչի միջամտությամբ:

բ. Թույլ է տալիս առոգանության խախտումներ:

Բ - ա. Կարդում է հիմնականում հստակ, արտահայտիչ՝ մեծ մասամբ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով:

բ. Առանձնացնում է տրամաբանական շեշտերը, սակայն դա անում է ուսուցչի որոշակի միջամտությամբ:

Գ - ա. Կարդում է անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով:

բ. Հստակ առանձնացնում է տրամաբանական շեշտերը՝ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան:

Ստացված արդյունքները գրանցել եմ համապատասխան աղյուսակում: Այդ արդյունքները վերլուծել ենք, ձեռնարկել ենք իրավիճակի բարելավման

գործողություններ՝ ըստ ԿԶՆԱԿ –ի տրամադրած ինքնազարգացնող, ընթերցանության որակը բարելավող ուղեցույցի, որտեղ գործառույթներ ունեն ուսուցիչը, ծնողը, մեթոդմիավորման նախագահը, տնօրենը, տնօրենի տեղակալը, գրադարանավարը, սովորողները: Այս ուղեցույցում նկարագրված է հետազոտության մասնակիցների աշխատանքները, մասնավորապես՝ դասվարի և ծնողի աշծատանքը, այն մեթոդները, որոնք կիրառելով պետք է հասնենք արդյունքների:

Հետազոտության նպատակն է ուսուցիչ-ծնող համագործակցության արդյունքում

. բարելավել սովորողների ընթերցանության որակը,

. ձևավորել և զարգացնել սովորողների մեջ ընթերցողական և լեզվական գրագիտության կարողունակությունը,

. ազգային և համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ընթերցանության միջոցով համամարդկային ու ազգային արժեքների դաստիարակում:

Ակնկալվող վերջնարդյունքներ

. կբարելավվի սովորողների ընթերցանության որակը,

. կձևավորվի և կզարգանա սովորողների մեջ ընթերցողական և լեզվական գրագիտության կարողունակությունը,

. Կդաստիարակվի ազգային և համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ընթերցանության միջոցով համամարդկային ու ազգային արժեքներ:

Հետազոտությունը կատարել եմ հոկտեմբերից մինչև հունիս: Աշխատանքները եղել են բազմաբովանդակ, որոնք բաժանվել են ըստ ամիսների:

. Ծնողը տանը կազմակերպում է ուսուցչի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար:

. Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի:

. Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել:

. Համագործակցում է գրադարանավարի հետ:

. Աջակցում է ուսուցչին ցուցահանդես իրականացնելու հարցում:

. Աջակցում է ուսուցչին տարատեսակ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար անհրաժեշտ է ծնողի մասնակցությունը:

Փետրվար և հունիս ամիսներին նորից ստուգել եմ սովորողների ընթերցանության տեխնիկան՝ վեր նշված ձևաչափով, արդյունքները գրանցել եմ աղյուսակում: Ըստ գրանցված արդյունքների նկատվել է ընթերցանության որակի բարձրացում, իրականացել են նպատակները և ունեցել ենք դրական վերջնարդյունք:

Բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգում

		հոկտեմբեր	**փետրվար**	**հունիս**	
Արագություն	Ա	5	4	3	
	Բ	19	15	9	
	Գ	11	16	23	
Սահունություն	Ա	6	6	6	
	Բ	23	22	21	
	Գ	6	7	8	
Ճշգրտություն	Ա	5	4	4	
	Բ	24	24	23	
	Գ	6	7	8	
Ընկալում	Ա	7	5	4	
	Բ	13	14	13	
	Գ	15	16	18	
Արտահայտչա-կանություն	Ա ա բ	6 8	4 6	4 6	
	Բ ա բ	12 2	10 3	9 2	
	Գ ա բ	1 6	5 7	6 8	
Աշակերտ՝ 35					

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության և ընտանեկան դաստիարակության հարցերում, պահանջում է անընդհատ և հետևողական աշխատանք: Սովորողների դաստիրակչական գործընթացը կրթական առաջադիմության բարելավման միջոց է: ՈՒսուցիչ-ծնող-աշակերտ փոխադարձաբար շաղկապված գործունեության կազմակերպման մոդել է, որի նպատակն է ձրավորել երեխայի արժեքային հարաբերություն աշխարհի և իր հետ: Այս մոդելը կարելի է բաժանել 3 հիմնական խմբերի՝ պասիվ, ակտիվ և ինտերակտիվ: Խմբերից յուրաքանչյուրը ձևավորում են դրական մոտիվացիա, բարձրացնում է ճանաչողական ակտիվությունը, նպաստում է ինքնուրույն գործունեությանը, բացահայտում անհատական հնարավորություններ և ստեղծում պայմաններ դրանց զարգացման համար:

Դաստիարակության ու կրթության կազմակերպման խնդիրն ունի և ունեցել է կարևոր նշանակություն ժամանակակից հասարակությունում, և կան բոլոր հիմքերը՝ մտածելու, որ առաջիկա տարիներին այն կդառնա առանցքային խնդիր մեր մանկավարժության մեջ: ՈՒստի կրթական բարեփոխումների արդյունքում պետք է փոխել նաև դպրոց- ընտանիք համարժեք կառույցների բնույթը:

Օգտագործված գրականության ցանկ

Բաբանսկի Յու., Մանկավարժություն, 1- ին հատոր, Մոսկվա-1996թ,

Մանուկյան Ս. Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն, Երևան, 2005թ.

Ընտանիք և դպրոց: Կրթության ազգային ինստիտուտի գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2008 թ.

ԿԶՆԱԿ «Ընթերցանությունը տարրական դպրոցում» մեթոդական ուղեցույց 2021թ.